




ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՅՈՒՍԻԿ ԱՐՔ. ՍԱՆԹՈՒՐԵԱՆԻ ԱՅՏԸ
ԻՐԱՔԱՀԱՅ ԹԵՄԻՆ

Սրտի անհուն գոհունակությամբ կու գանք յայտնելու թէ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ եւ Առաջնորդարանիս հրաւերով աւագ շաբթուայ եւ Ս. Զատկուայ տօնակատարութեանց առիթով 19 Մարտին—13 Ապրիլ 1989 Իրաքահայ թեմս այցելեց Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի անդամ եւ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի Լուսարարապետ Գերաշնորհ Տ. Յուսիկ Արք. Սանթուրեանը:

Յուսիկ Սրբազան Պաղտատ ժամանեց Ծաղկազարդի օրը: Օղակայան դիմադրելու գացած էին Առաջնորդ Սրբազան Հայրը, քահանայից դասը, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամները, միութենական հաստատութիւններու ներկայացուցիչներ եւ հոյլ մը ազգայիններ:

Ժամանակը ուշ ըլլալուն «հրաշափառ»-ի արարողութիւնը տեղի ունեցաւ յաջորդ օրը՝ աւագ երկուշաբթի երեկոյեան ժամը 5.30-ին: Կանոնական աղօթքներէ վերջ, Առաջնորդ Սրբազան Հայրը՝ Գերաշնորհ Տ. Աւագ Եպս. Ասատուրեան, յանուն Իրաքահայութեան, Ազգ. Կեդրոնական Վարչութեան, հաստատութիւններու եւ անձամբ բարի գալուստ մաղթեց հիւր Սրբազանին ու հրաւիրեց որ ան իր խօսքով միախառն հաւատացեալ ժողովուրդը: Մայր Տաճարի Լուսարարապետը ժողովուրդին փոխանցեց Ամենայն Հայոց Վեհափառ

Հայրապետի կենարար յորհմութիւնները, ինչպէս նաեւ յորդորեց որ իրաքահայերը մնան շինարար քաղաքացիներ Իրաքեան հայրենիքին, անեղծ պահելով հանդերձ իրենց հայկական դիմագծութիւնը:

Ապա Սրբազանը անդրադարձաւ հայրենիքի մեծ երկրաշարժին՝ տալով մանրամասնութիւններ Ամենայն Հայոց Հայրապետի երկրաշարժի վայրեր այցի վերաբերեալ: Իր խօսքին աւարտին Յուսիկ Սրբազան անդրադարձաւ Իրաքի արձանագրած զարթօնքին եւ աղօթք բարձրացուց առ Աստուած խաղաղութեան տեւականութեան համար:

Յուսիկ Սրբազան նախագահեց աւագ շաբթուայ հոգեշունչ արարողութեանց: Իսկ Կիրակի, 26 մարտ, Ս. Զատկուան տօնին առթիւ, պատարագ մատուց Պաղտատի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ: Եկեղեցին ու ընդարձակ բակը լեցուն էին հաւատացեալներու հոծ բազմութեամբ մը. հաղորդութեան մօտաւորապէս երկու հազար հաւատացեալներ:

Օգտուելով Յուսիկ Սրբազանի ներկայութենէն աւագ շաբթ օրուայ առաւօտեան Թեմիս Բարեխնամ Առաջնորդը մեկնեցաւ Պատրա ուր նախագահեց Ծրագալոյցի արարողութեան, իսկ Կիրակի 26 Մարտ Ս. Զատկուան առթիւ պատարագեց եւ յաւուր պատշաճի քարոզեց:

Նախօրօք առնուած ժամադրութեան հա-

մաձայն, 28 Մարտին Յուսիկ Արքեպիսկոպոսն ու թեմիս առաջնորդը պաշտօնական այցելությունն ատին Կրօնից եւ Կալուսածոց Հարցերու նախարարին: Բարի գալստեան խօսքէն վերջ յարգոյ նախարարը հարցոց երկրաշարժի մասին եւ անգամ մը եւս յայտնեց իր ցաւակցութիւնը երկրաշարժի պատճառած մարդկային եւ նիւթական կորուստին: Յանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին Յուսիկ Արքեպիսկոպոսը հաշտութիւն յայտնեց Իրաքի հանրապետութեան ցուցաբերած օժանդակութեան համար: Հանդիպումը անցաւ շատ ջերմ մթնոլորտի մէջ:

Յուսիկ Արքեպիսկոպոսն եւ Թեմիս Առաջնորդը, ընկերակցութեամբ Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամներու հերթաբար այցելեցին Իրաքի հայաշատ շրջաններ՝ Քէրքուկ, Մուսուկ, Ջախօ եւ Պարսա: Բոլոր շրջաններու մէջ Յուսիկ Արքեպիսկոպոսը հարգեց եւ փոխանցեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնութիւնները: Ամենուր հիւրերը պատուեցան ճաշկերոյքներով:

Արքեպիսկոպոսն այցելեցին Թեմիս կիրակնօրեայ վարժարանը, ինչպէս նաեւ Պաղտատի մէջ գործող չորս հայկական միութիւններու կեդրոնատեղիները եւ ծանօթացան անոնց գործունէութեան ու անդամներուն: Յուսիկ Արքեպիսկոպոսը քաջ գնահատեց կատարուած եկեղեցանաւէր ու ազգաշէն աշխատանքները, որոնք կու գան փաստելու Իրաքահայ համայնքի կենսունակ վիճակը:

Պաղտատ կեցութեան ընթացքին Յուսիկ Արքեպիսկոպոսը ընդունեց քոյր յարանուանութեանց կրօնապետներու այցը:

Թեմիս առաջնորդի հովանաւորութեամբ

եւ Ազգային Կեդրոնական Վարչութեան հրաւերով Ապրիլ 12ին առաջնորդարանիս յաւիլճին մէջ ողջերթի թէյասեղան մը տրուեցաւ ի պատիւ Յուսիկ Արքեպիսկոպոսին որուն մասնակցեցան հոգեւորականաց դասը, առաջնորդարանիս առընթեր յանձնախումբերը, համայնքիս մէջ գործող միութիւններու վարչական կազմերը: Խօսք առին Ազգ. Կեդրոնական Վարչութեան ատենապետ Տօքթ. Պօղոս Պօղոսեանը եւ Առաջնորդ Արքեպիսկոպոսը: Մոյն բարեբաստ առթիւ յանուն Իրաքահայ թեմին Եպիսկոպոսական մատանի մը նուիրուեցաւ Մայր Տաճարի Լուսարարապետին: Ողջերթի պաշտօնական մասը վերջ գտաւ Յուսիկ Արքեպիսկոպոսի խօսքով: Արքեպիսկոպոսը Էջմիածին վերադարձաւ 13 Ապրիլ 1989ին:

Իրաքահայ գաղթօճախին տրուած այս այցելութիւնը ցայտուն ապացոյց է մեր թեմին ունեցած անքակտելի կապութեան, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ անոր ազգընտիր գահակալ Ն. Ս. Օ. Ս. Ս. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին հետ:

Գերաշնորհ Տ. Յուսիկ Արքեպիսկոպոսի այցելութեան ամբողջ տեւողութեան ընթացքին Իրաքահայերը ապրեցան խանդավառ ու հոգեշէն օրեր հիւր Արքեպիսկոպոսին անձին ընդմեջէն ստանալով կարօտը հայրենիքին, հայրենի ժողովուրդին, հայ մշակոյթին ու մեր սրբութիւններուն:

Թող ասարգեւատուն բարեաց մեր հայրերու Աստուածը այլեւս անվնաս պահէ մեր յափտեմական հայրենիքն, ինչպէս նաեւ լուսազարդ Սրբութիւն Սրբոց Էջմիածինը Ամենայն Հայոց:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԻՐԱՔԻ

